գժողովն Քաղկեդոնի. յետոյ և 'ի Հայոց Թարգմանչացն · դարձեալքն յԱթենայ գնացին անդ, բայց ոչ յայտնեցին զեն-քեանս յահէ Թագաւորին. որք էին Յով-սէփ Կաղանեցին և Եզնակ Կողբացին. և եկեալ 'ի Հայք պատմեցին զբանս ժողո-վոյն. որք ասացին Բ. կամք' և երկու ներ-գործութիւնք 'ի Քրիստոս, և զանգոս-նելի կիրս եղին 'ի Քրիստոս: Եւ Հալա-ծեցին զՀայս և զԱսորիս' տուեալ զկար-գաւորս և զաբեղայս: Եւ զՄիջագետս աշ-խարհն անապատ արարին, զի աւելի քան զՂՃ. վանք քակեցին: Եւ զաբեղայսն դնէին 'ի մէջ սանի և խարշէին: Իսկ ինքն Մարկիանոս յետ այսքան չարութեանցն' զոր Հայոց եկեղեցւոյ, սպանաւ 'ի զօրաց իւրոց դառն մահուամբ:

Լեոն առաջին' կամ անուն Ոնքոս կո-չեցեալ' սկսաւ յամի Տեառն ՆՀԲ. ինք-նակալեալ ամս ԺԲ. և ամիսք ԺԵ. ասեն: Ընդ սորին ժամանակն Բ. ամիսք

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան